

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
ՍԱԿԱԳՆԵՐ
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ
ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. Միջնորդավճարները գանձվում են ՀՀ դրամով:
2. Արտարժույթի գումարի նկատմամբ տոկոսներով արտահայտված միջնորդավճարները գանձվում են ՀՀ դրամով՝ հիմք ընդունելով գանձման օրվա դրությամբ Բանկի սահմանած տվյալ արտարժույթի անկանխիկ առքի փոխարժեքը:
3. Բանկում հաճախորդի հաշիվներին ՀՀ դրամով բավարար միջոցներ չլինելու դեպքում Բանկն իրավունք ունի միջնորդավճարի գումարը կամ դրա մի մասը փոխարկել արտարժույթով ունեցած միջոցներից՝ հիմք ընդունելով գանձման օրվա դրությամբ Բանկի սահմանած տվյալ արտարժույթի առքի փոխարժեքը:
4. Բանկային գործառնությունների կատարման հետ կապված փոստային, հեռագրային, հեռախոսային, տելեքսային և ֆաքսիմիլային կապի ծախսերը, ինչպես նաև երրորդ բանկի ծախսերը գանձվում են լրացուցիչ:
5. Բանկը կարող է գործող սակագներում կատարել փոփոխություններ և լրացումներ, որոնց մասին Բանկը ծանուցում է հաճախորդներին՝ փոփոխությունների և լրացումների տեքստը Բանկի տարածքում կամ Բանկի ինտերնետային կայքում հասանելի դարձնելու միջոցով: Փոփոխությունները և լրացումներն ուժի մեջ են մտնում Բանկի կողմից սահմանված պահից, բայց դրանց մասին հաճախորդներին ծանուցելու օրվանից ոչ շուտ:
6. Հիմք ընդունելով Բանկի և հաճախորդի միջև երկարատև համագործակցությունը, հաճախորդի գործարքների ծավալները և այլ հիմնավոր պատճառներ՝ Բանկի կողմից կարող են կիրառվել այլ սակագներ և դրույթներ, որոնք սահմանվում են այլ փաստաթղթերով և (կամ) լրացուցիչ կնքվող պայմանագրերով, համաձայնագրերով:
7. Այն միջնորդավճարները, որոնք ենթակա են ԱԱՀ-ով հարկման, ներառում են նաև ԱԱՀ-ն:
8. Ծառայությունների դադարեցման դեպքում մինչ այդ վճարված միջնորդավճարները վերադարձման ենթակա չեն:

2. ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ԲԱՑՈՒՄ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Սակագին	Պրեմիում/ Փարթներ
1. Հաշվի բացում ծառայությունների փաթեթով (փաթեթը ներառում է ՀՀ դրամով և մեկ արտարժույթով հաշիվ, Ինտերնետ-Բանկ/Մոբայլ բանկ համակարգ (Ամերիա Թոքեն ծրագրային ապահովման կողմից օգտագործմամբ)՝ անվճար, մեկ VISA Classic կամ MasterCard Standard վճարային քարտ՝ առանց տարեկան սպասարկման վճարի) ¹	անվճար
2. Հաշվի բացման միջնորդավճար²	
2.1. ՀՀ դրամով հաշիվներ	
2.1.1. ՀՀ քաղաքացի հանդիսացող հաճախորդների համար	անվճար
2.1.2. ՀՀ քաղաքացի չհանդիսացող հաճախորդների համար	անվճար
2.2. Արտարժույթով հաշիվներ	
2.2.1. Երևան քաղաքում գտնվող Բանկի մասնաճյուղերում	անվճար
2.2.2. Երևան քաղաքից դուրս գտնվող Բանկի մասնաճյուղերում	անվճար
3. Հաշվի նվազագույն մնացորդ³	
4. Հաշվի վարում⁴	
4.1. Օրացուցային կիսամյակի ընթացքում հաճախորդի հաշիվներով նվազագույնը 150,000 ՀՀ դրամին համարժեք շրջանառության առկայության կամ հաշիվների միջին օրական մնացորդը 50,000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում	անվճար
4.2. Օրացուցային կիսամյակի ընթացքում հաճախորդի որևէ հաշվով 150,000 ՀՀ դրամից փոքր շրջանառության կամ հաշվի միջին օրական մնացորդը 50,000 ՀՀ դրամից պակաս լինելու դեպքում	անվճար

¹Փաթեթը գործում է միայն ՀՀ քաղաքացի հանդիսացող հաճախորդների համար: Փաթեթի մեկ կամ մի քանի ծառայությունից հրաժարվելու դեպքում փաթեթի արժեքը չի փոխվում:

Փաթեթից դուրս ծառայությունների համար գործում են տվյալ ծառայության համար սահմանված միջնորդավճարները:

«Սմարթ» հաշիվ բացելու պարագայում հեռահար եղանակով փաթեթը տրամադրվում է անվճար:

Փաթեթը տարածվում է գործող հաճախորդների վրա այն դեպքում, երբ հաճախորդը չունի փաթեթում ներառված որևէ ծառայություն:

²Ժամկետային, խնայողական ավանդ ներդնելիս, բրոքերային հաշիվ բացելիս հաշվի բացման միջնորդավճար չի գանձում:

Բանկային ծառայություններից օգտվելիս ՀՀ դրամով բանկային հաշիվ բացելը պարտադիր է:

³ Հաշվի դրական մնացորդի վրա հաշվարկվող տարեկան տոկոսադրույքը սահմանվում է 0%:

⁴ Հաճախորդի որևէ հաշվի շրջանառությունը (այդ թվում քարտային) տարածվում է հաճախորդի մնացած բոլոր հաշիվների վրա (այս դրույթը գործում է միայն միջնորդավճարի գանձման տեսանկյունից): Ընդ որում, եթե հաճախորդը ունի գործող քարտին կից քարտային հաշիվ միայն, ապա միջնորդավճարը չի գանձվում, իսկ փակված քարտին կից քարտային հաշվի դեպքում միջնորդավճարը գանձվում է: Միջնորդավճարը գանձվում է յուրաքանչյուր օրացուցային կիսամյակին հաջորդող երկու շաբաթվա ընթացքում:

Նախորդ 12 ամիսների ընթացքում բոլոր հաշիվներով շրջանառության բացակայության դեպքում հաճախորդի հաշվով դեբետագրումը սահմանափակվում է յուրաքանչյուր օրացուցային եռամսյակին հաջորդող երկու շաբաթվա ընթացքում:

Նախորդ 12 ամիսների ընթացքում հաշվով շրջանառության բացակայության և մնացորդի զրոյական լինելու դեպքում հաճախորդի հաշիվը փակվում է յուրաքանչյուր օրացուցային կիսամյակին հաջորդող երկու շաբաթվա ընթացքում:

Հաշվի վարման միջնորդավճար չի գանձվում բրոքերային հաշիվներ ունեցող հաճախորդների դեպքում:

5. Հաշվի հեռակա սպասարկման վճարներ⁵	
5.1. Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ-Բանկինգ համակարգով՝ հաշիվների քաղվածքներ և գործարքներ դիտելու, գործարքներ կատարելու իրավունքով.	
5.1.1. Մեկանգամյա ծածկագիր գեներացնող սարքի օգտագործմամբ	անվճար
5.1.2. Ամերիա Թոքեն ծրագրային ապահովման կողմից օգտագործմամբ	անվճար
5.1.3. Ծածկագիր գեներացնող սարքի/Ամերիա Թոքենի, տրամադրում (կորցնելու կամ վնասելու դեպքում), սարքի տեսակի փոխարինում	1,000 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ
5.2. Հեռախոս – բանկ ծառայության միջոցով ⁶	անվճար
6. Քաղվածքների, տեղեկատվական նյութերի և կրկնօրինակների տրամադրման միջնորդավճար	
6.1. Մինչև 1 տարի վաղեմություն ունեցող քաղվածքի, քաղվածքի կրկնօրինակի կամ էլեկտրոնային ձևով պահվող այլ փաստաթղթի տրամադրում	անվճար

⁵ Բանկը յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար սահմանում է արտարժույթի առք և վաճառքի փոխարժեքներ, որոնք գործում են Բանկի աշխատանքային ժամերին: Հեռակառավարման համակարգերով հաճախորդների սպասարկման ընթացքում աշխատանքային ժամերից դուրս (մինչև ժամը 09:30 և ժամը 17:00-ից հետո), նաև ոչ աշխատանքային օրերին (այդ թվում նաև շաբաթ օրերին) ստացված արտարժույթի փոխանակման հայտերը Բանկի կողմից կարող են մերժվել:

⁶ Հեռախոս-բանկ ծառայության շրջանակներում իրականացվում են հետևյալ գործարքները՝ ստորև նշված սահմանաչափերով՝

N	Գործարքի տեսակ	1 գործարքի սահմանաչափ (ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ)
1	ձայնային տեղեկատվության ստացում առկա հաշիվների վերաբերյալ՝ հեռախոսակապի միջոցով	սահմանաչափ չի կիրառվում
2	արտարժույթի առուվաճառքի գործարք կատարելու նպատակով գործարքի մեծության (ծավալի) և փոխարժեքի սահմանում (համաձայնեցում) Բանկի հետ հեռախոսակապի միջոցով	սահմանաչափ չի կիրառվում
3	ներբանկային փոխանցումներ հաճախորդի հաշիվների միջև	մինչև 10 000 000 ՀՀ դրամ
4	ներբանկային փոխանցումներ այլ հաճախորդի հաշիվներին	մինչև 10 000 000 ՀՀ դրամ
5	արտարժույթի անկանխիկ փոխարկում	մինչև 10 000 000 ՀՀ դրամ
6	ՀՀ այլ Բանկեր կատարվող փոխանցումներ, եթե հաճախորդը նշված փոխանցումն արդեն իսկ կատարել է	մինչև 5 000 000 ՀՀ դրամ
6,1	ՀՀ այլ Բանկեր կատարվող փոխանցումներ, եթե հաճախորդը առաջին անգամ է կատարում նշված փոխանցումը	մինչև 3 000 000 ՀՀ դրամ
7	միջազգային փոխանցումներ	օրական առավելագույնը 2 000 000 ՀՀ դրամ
8	կոմունալ վճարումներ	մինչև 1 000 000 ՀՀ դրամ

6.2. 1 տարուց ավել վաղեմություն ունեցող քաղվածքի, քաղվածքի կրկնօրինակի տրամադրում կամ էլեկտրոնային ձևով պահվող այլ փաստաթղթի տրամադրում ⁷	անվճար
6.3. Թղթային ձևով պահվող կամ 1 տարուց ավել վաղեմություն ունեցող էլեկտրոնային եղանակով պահվող փաստաթղթի կրկնօրինակի տրամադրում	5,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր փաստաթղթի համար
6.4. Տեղեկանքների տրամադրում	
6.4.1. 3 ամիս և ավել հաշվետեր հաճախորդներին	անվճար
6.4.2. Մինչև 3 ամսվա հաճախորդներին	անվճար
6.4.3. Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ-Բանկինգ համակարգով/ Բանկի կայքով պատվիրելու դեպքում ⁸	անվճար
6.5. Քաղվածքի առաքում	
6.5.1. Էլեկտրոնային փոստով	անվճար
6.5.2. Փոստով՝ ՀՀ տարածքում	անվճար
6.5.3. Փոստով՝ ՀՀ տարածքից դուրս ⁹	համաձայն փոստային ծառայության կողմից ներկայացված ծախսերի
7. SMS հաղորդագրությունների միջոցով տեղեկատվության տրամադրում	
7.1. Գործառնական SMS հաղորդագրություններ	
7.1.1. հաշվի մնացորդ օրական պարբերականությամբ	անվճար
7.1.2. հաշվի մնացորդ նվազագույնը շաբաթական պարբերականությամբ	անվճար
7.1.3. հաշվով վերջին գործառնությունների վերաբերյալ համառոտ քաղվածք	անվճար
7.2. Տեղեկատվական SMS հաղորդագրություններ	
7.2.1. բանկի փոխարժեքներ յուրաքանչյուր փոփոխության դեպքում, 7.2.1.1. կանխիկ փոխարժեք 7.2.1.2. անկանխիկ փոխարժեք	անվճար
7.2.2. օրական կտրվածքով ՀՀ ԿԲ կողմից հրապարակվող արտաժողովային շուկայի միջին փոխարժեք	անվճար
8. Կոմունալ վճարումների պարբերական գաձման կատարում	անվճար
9. Հաճախորդների կողմից ներկայացված պարբերական հանձնարարականների կատարում ¹⁰	անվճար
10. Հաճախորդի կողմից լիազորագրի տրամադրում (Լիազորողի փաստացի ներկայությամբ)	անվճար

3. ԿԱՆԽԻԿՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

⁷ Երեք տարուց ավելի վաղեմություն ունեցող քաղվածքների, դրանց կրկնօրինակների և այլ նյութերի (այդ թվում՝ տեղեկանքների, փաստաթղթերի, դրանց կրկնօրինակների) տրամադրումն իրականացվում է պայմանագրային հիմունքներով:

⁸ Տեղեկանքի հայտը պետք է ներկայացված լինի առնվազն մեկ բանկային օր առաջ:

⁹ Առաքումը կատարվում է ռեգուլյար փոստի միջոցով:

¹⁰ Պարբերական հանձնարարականում պարտադիր պետք է հստակ ներկայացված լինի գործարքի ամսաթիվը, արժույթը, գումարը, ստացողի անունը/հաշվի համարը:

Սակագին	Պրեմիում/ Փարթներ
1. Կանխիկ միջոցների մուտքագրում հաճախորդի հաշվին	
1.1. ՀՀ դրամ	
1.1.1. Մինչև 50,000 ՀՀ դրամ ներառյալ ¹¹	անվճար
1.1.2. 50,000 ՀՀ դրամից ավելի	անվճար
1.2. ԱՄՆ դոլար, եվրո	անվճար
1.3. ՌԴ ռուբլի, բրիտանական ֆունտ, շվեյցարական ֆրանկ և այլ արտարժույթ ¹²	անվճար
2. Կանխիկ տրամադրում¹³	
2.1. Հաճախորդի հաշվին կանխիկ մուտքագրված միջոցներից	անվճար
2.2. Հաճախորդի հաշվին անկանխիկ մուտքագրված միջոցներից ¹⁴	
2.2.1. ՀՀ դրամ	
2.2.1.1. Երևան քաղաքում գտնվող Բանկի մասնաճյուղերում	անվճար
2.2.1.2. Երևան քաղաքից դուրս գտնվող Բանկի մասնաճյուղերում	անվճար

¹¹ Բացառությամբ հետևյալ դեպքերի, որոնց պարագայում հաշվին կանխիկ միջոցների մուտքագրման դեպքում միջնորդավճար չի գանձվում.

- ✓ Միջնորդավճարի գանձման նպատակով կանխիկի մուտքագրում
- ✓ ՀՀ Պետական և/կամ տեղական ինքնակառավարման մարմիններին, այդ թվում՝ նոտարական գրասենյակներին, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի սպասարկման գրասենյակներին և պետական այլ մարմինների հաշիվներին կատարվող փոխանցումների նպատակով կանխիկի մուտքագրում
- ✓ Մասնագետ-գանձապահի միջոցով կատարվող այլ գործարքների հետ միաժամանակ իրականացվող կանխիկի Մուտքագրում:

¹² Ժամկետային ավանդ ներդնելիս կանխիկի մուտքագրումը կատարվում է անվճար: Ավանդի ներդրումից հետո 30 օրվա ընթացքում ժամկետից շուտ ընդհատվող ավանդների դեպքում ավանդը մարելիս գանձվում է միջնորդավճար՝ ավանդի փաստացի մարման օրվա դրությամբ Բանկում գործող կանխիկի մուտքի դրույքաչափի չափով:

¹³ Կանխիկ միջոցների տրամադրումն իրականացվում է հաճախորդի կողմից գումարը ստանալու նախորդ աշխատանքային օրը ներկայացված հայտի հիման վրա՝ հայտի ընդունումից հետո 1(մեկ) գործառնական օրվա ընթացքում, եթե գումարը գերազանցում է 30 մլն ՀՀ դրամը, 100,000 ԱՄՆ դոլարը և 30,000 եվրոն և 1 մլն ՀՀ դրամին համարժեք արտարժույթը՝ մյուս արտարժույթների համար՝ գլխամասային գրասենյակում: Երևան քաղաքում գտնվող Բանկի մասնաճյուղերի համար սահմանվում է հետևյալ սահմանաչափը՝ 20 մլն ՀՀ դրամ, 25,000 ԱՄՆ դոլար և 15,000 եվրո, իսկ Երևան քաղաքից դուրս գտնվող Բանկի մասնաճյուղերում՝ 10 մլն ՀՀ դրամ, 20,000 ԱՄՆ դոլար և 10,000 եվրո: Երևան քաղաքից դուրս գտնվող Բանկի մասնաճյուղերի դեպքում նշված սահմանաչափը գերազանցող կանխիկի տրամադրումը իրականացվում է հաճախորդի կողմից հայտը ներկայացնելուց հետո մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Այն դեպքում, երբ հաշվից կանխիկացումից հետո հաճախորդը փակում է բոլոր հաշիվները և հաճախորդի մնացորդը փոքր քան սակագներով սահմանված կանխիկացման նվազագույն գումարը, կանխիկացումից միջնորդավճար չի գանձվում:

- ¹⁴ Կանխիկի տրամադրման միջնորդավճար չի գանձվում հետևյալ միջոցների կանխիկացման դեպքերում.
- ✓ ժամկետային ավանդներից գոյացած միջոցների, այդ թվում տոկոսագումարների դեպքում (բացառությամբ ժամկետից շուտ մարվող ավանդների)
 - ✓ խնայողական ավանդների տոկոսագումարների դեպքում
 - ✓ պարտատոմսերի գումարների, այդ թվում՝ արժեկտրոնի վճարման դեպքում՝ մինչև պարտատոմսի մարման ժամկետը պարտատոմսը պահպանելու դեպքում

Բանկի կողմից վարկի տրամադրումից առաջացած գումարներից կիրառվում է նշված սակագինը, եթե տվյալ վարկատեսակի պայմաններով այլ սակագին չի սահմանվում:

2.2.2. ՌԴ ռուբլի	0.2%, նվազագույնը՝ 1,000 ՀՀ դրամ
2.2.3. Այլ արտարժույթ	0.3%, նվազագույնը՝ 1,000 ՀՀ դրամ
2.3. Ամերիաբանկի կանխիկացման կետերում (POS տերմինալ) այլ բանկերի կողմից թողարկված պլաստիկ քարտերով կանխիկի տրամադրում	1%, նվազագույնը՝ 1,500 ՀՀ դրամ
2.4. Կանխիկի տրամադրում հաշվետեր չհանդիսացող հաճախորդներին	N/A
2.5. Ներբանկային (Ամերիաբանկի համակարգում) փոխանցումներից կանխիկ միջոցների տրամադրում հաշվետեր չհանդիսացող հաճախորդներին	
2.5.1. ՀՀ դրամի դեպքում	N/A
2.5.2. Արտարժույթի դեպքում	N/A
3. Հաշվետեր չհանդիսացող հաճախորդներից ՀՀ դրամի մետաղադրամների ընդունում, տրամադրում, փոխանակում	
3.1. Մինչև 50,000 ՀՀ դրամ ներառյալ մետաղադրամի ընդունում, տրամադրում, փոխանակում	N/A
3.2. 50,000 ՀՀ դրամից ավելի մետաղադրամի ընդունում, տրամադրում, փոխանակում	N/A
4. Արտարժույթի մետաղադրամների ընդունում	
4.1. Եվրո (ընդունվում են 20 ցենտ և ավելի մետաղադրամներ)	ընդունվող գումարի 20%
4.2. ԱՄՆ դոլար և այլ արտարժույթների մետաղադրամներ	չի ընդունվում
5. Հնամաշ դրամանիշերի փոխանակում	
5.1. ՀՀ դրամ	անվճար
5.2. Եվրո, ԱՄՆ դոլար	անվճար
5.3. Բրիտանական ֆունտ ստեռլինգ, Շվեյցարական ֆրանկ, Կանադական դոլար, Ավստրալական դոլար	5%
6. Կանխիկ արժույթի ստուգում և փաթեթավորում (ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, եվրո, բրիտանական ֆունտ, ՌԴ ռուբլի և շվեյցարական ֆրանկ)	անվճար
7. Կոմունալ վճարումների ընդունում բանկի դրամարկղերում հաշվետեր հանդիսացող հաճախորդների համար ¹⁵	անվճար
8. Կանխիկի ինկասացիա	
8.1 Մինչև 5 մլն ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ	2. կետով սահմանված միջնորդավճար+ 10,000 ՀՀ դրամ
8.2 5 մլն ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ	2. կետով սահմանված միջնորդավճար+

¹⁵ Հաշվետեր չհանդիսացող հաճախորդներից վճարումներն ընդունվում են միայն վճարային տերմինալների միջոցով:

	0.1%+ինկասացիայի փաստացի ծախս
--	-------------------------------

4. ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ¹⁶

Սակագին	Պրեմիում/ Փարթներ
1. Փոխանցումներ ՀՀ դրամով	
1.1. Ներբանկային	անվճար
1.2. ՀՀ բանկեր	
1.2.1. Հաշվետեր հանդիսացող հաճախորդների համար ¹⁷	անվճար
1.2.2. Հաշվետեր չհանդիսացող հաճախորդների համար՝ Երևան քաղաքում գտնվող Բանկի մասնաճյուղերում	N/A
1.2.3. Հաշվետեր չհանդիսացող հաճախորդների համար՝ Երևան քաղաքից դուրս գտնվող Բանկի մասնաճյուղերում	N/A
2. Փոխանցումներ արտարժույթով¹⁸	
2.1. Ներբանկային	անվճար

¹⁶ Բանկը թղթային եղանակով և հեռակառավարման համակարգերով վճարման հանձնարարականները ընդունում և փոխանցում է համաձայն ստորև սահմանված ժամանակացույցի՝ հաճախորդի հաշվին փոխանցման ենթակա գումարի փաստացի առկայության պարագայում.

	Թղթային եղանակով ներկայացվող վճարման հանձնարարականներ				Բանկ-Հաճախորդ/Դստերնետ-Բանկինգ/ Մոբայլ բանկինգ համակարգերով ներկայացվող վճարման հանձնարարականներ Հեռախոս – բանկ ծառայության միջոցով ներկայացվող վճարման հանձնարարականներ (բացառությամբ ներբանկային փոխանցումների)			
	Ընդունում	Փոխանցում	Ընդունում	Փոխանցում	Ընդունում	Փոխանցում	Ընդունում	Փոխանցում
ՀՀ դրամ	Մինչև ժամը 13:00	Նույն բանկային օրը	Ժամը 13:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը	Մինչև ժամը 14:00	Նույն բանկային օրը	Ժամը 14:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը
ԱՄՆ դոլար	Մինչև ժամը 16:00	Նույն բանկային օրը	Ժամը 16:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը	Մինչև ժամը 17:00	Նույն բանկային օրը	Ժամը 17:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը
Այլ արտարժույթ	Մինչև ժամը 15:00	Նույն բանկային օրը	Ժամը 15:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը	Մինչև ժամը 16:00	Նույն բանկային օրը	Ժամը 16:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը

Հեռախոս-բանկ ծառայության միջոցով իրականացվող ներբանկային փոխանցումները կատարվում են նույն օրվա ընթացքում: Քարտային հաշիվներից փոխանցումներ կատարելիս 4-րդ գլխով սահմանված փոխանցումների միջնորդավճարներին գումարվում են նաև քարտային հաշիվներից փոխանցումների համար սահմանված միջնորդավճարները (տե՛ս Քարտերի տրամադրման և սպասարկման պայմանները):

¹⁷ Ժամը 13:00-ից մինչև 15:00-ը թղթային եղանակով ներկայացված 50 մլն դրամը չգերազանցող վճարման հանձնարարականների (14:00-ից մինչև 15:15-ը էլեկտրոնային վճարման հանձնարարականների դեպքում) հիման վրա նույն բանկային օրը փոխանցում կատարելու համար գանձվում է 10,000 ՀՀ դրամ միջնորդավճար՝ յուրաքանչյուր վճարման հանձնարարականի համար:

¹⁸ Այն դեպքում, երբ փոխանցվող գումարը կազմում է 3 մլն և ավել ԱՄՆ դոլար կամ համարժեք այլ արտարժույթ, փոխանցումները կատարվում են միայն 2.2, 2.3.2, 2.4.2 տարբերակներով՝ 1,000,000 ՀՀ դրամ միջնորդավճարով: Միբիական, կուբայական բանկեր և դրանց մասնաճյուղեր հասցեագրվող փոխանցումները կատարվում են ծախսերի 2.3.1 և 2.4.1 կետերում նշված տարբերակներով:

2.2. ՌԴ ռուբլով	
2.2.1. Թղթակից և բոլոր միջնորդ բանկերի ծախսերը գանձվում են փոխանցվող գումարից	3,000 ՀՀ դրամ
2.2.2. Թղթակից և բոլոր միջնորդ բանկերի ծախսերը կրում է բանկը	0.1 %, նվազագույնը՝ 3,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 30,000 ՀՀ դրամ
2.3. ԱՄՆ դոլարով, եվրոյով	
2.3.1. Թղթակից և բոլոր միջնորդ բանկերի ծախսերը գանձվում են փոխանցվող գումարից	5,000 ՀՀ դրամ
2.3.2. Թղթակից բանկի ծախսերը կրում է բանկը, իսկ առկայության դեպքում բոլոր միջնորդ բանկերի ծախսերը գանձվում են փոխանցվող գումարից	
2.3.2.1. Վճարման հանձնարարականը թղթային ներկայացնելու դեպքում	0.1%, նվազագույնը՝ 7,500 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 50,000 ՀՀ դրամ
2.3.2.2. Վճարման հանձնարարականը Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ բանկինգ համակարգով ներկայացնելու դեպքում	0.1%, նվազագույնը՝ 6,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 50,000 ՀՀ դրամ
2.3.3. Թղթակից և բոլոր միջնորդ բանկերի ծախսերը կրում է բանկը	2.3.2 կետով սահմանված միջնորդավճար + 10,000 ՀՀ դրամ
2.4. Բանկի կողմից գնանշվող այլ արտարժույթներով	
2.4.1. Թղթակից և բոլոր միջնորդ բանկերի ծախսերը գանձվում են փոխանցվող գումարից	5,000 ՀՀ դրամ
2.4.2. Թղթակից բանկի ծախսերը կրում է բանկը, իսկ առկայության դեպքում բոլոր միջնորդ բանկերի ծախսերը հետագայում փոխհատուցվում են հաճախորդին կողմից ¹⁹	
2.4.2.1. Վճարման հանձնարարականը թղթային ներկայացնելու դեպքում	0.1%, նվազագույնը՝ 12,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 50,000 ՀՀ դրամ
2.4.2.2. Վճարման հանձնարարականը Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ բանկինգ համակարգով ներկայացնելու դեպքում	0.1%, նվազագույնը՝ 10,000 ՀՀ դրամ,

¹⁹ Ամերիաբանկի միջնորդ բանկերի կողմից ներկայացված ծախսերը ենթակա են փոխհատուցման հաճախորդի հաշվից:

	առավելագույնը՝ 50,000 ՀՀ դրամ
2.5. Բանկում չգնանշվող արժույթներով գումարի փոխանցում ²⁰	0.2%, նվազագույնը՝ 20,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 100,000 ՀՀ դրամ
2.6. ARCA, VISA, Mastercard համակարգերի քարտից Ամերիաբանկի հաճախորդների հաշիվներին գումարի փոխանցում ²¹	2%
2.7. Հաշվետեր չհանդիսացող հաճախորդների համար	
2.7.1. ՌԴ ռուբլով	N/A
2.7.2. ԱՄՆ դոլարով, եվրոյով և բանկի կողմից գնանշվող այլ արտարժույթներով ²²	N/A
3. Փոխանցումներ ոսկով (999.9)	
3.1. Ներբանկային	անվճար
3.2. ՀՀ այլ բանկեր և արտերկիր ¹⁶	15,000 ՀՀ դրամ (յուրաքանչյուր մուտքի և ելքի համար)
4. Հաճախորդի դիմումի համաձայն վճարման հանձնարարականի տվյալների փոփոխում և չեղյալ համարում²³	
4.1. ՀՀ դրամ	1,000 ՀՀ դրամ
4.2. Արտարժույթ ²⁴	25,000 ՀՀ դրամ
5. Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ Բանկինգ համակարգով հաճախորդի դիմումի համաձայն վճարման հանձնարարականի տվյալների փոփոխում և չեղյալ համարում²⁵	
5.1. ՀՀ դրամով վճարման դեպքում	500 ՀՀ դրամ
5.2. ՌԴ ռուբլով վճարման դեպքում	10,000 ՀՀ դրամ
5.3. Այլ արտարժույթով վճարման դեպքում	25,000 ՀՀ դրամ
6. Հաճախորդի կողմից թերի կամ սխալ ներկայացված տվյալների արդյունքում (ներառյալ շահառուի համապատասխան հաշիվը փակված	

²⁰ Փոխանցումը կատարվում է ԱՄՆ դոլարով, իսկ ստացողի հաշիվին մուտքագրվում է հաճախորդի նախընտրած արտարժույթով:

²¹ Միևնույն հաշվի վրա կարող է կատարվել օրական առավելագույնը 3 գործարք: Մեկ գործարքի առավելագույն գումարը սահմանվում է քստ հետևյալի.

Արժույթ	Գումար
ՀՀ Դրամ	500,000
ԱՄՆ դոլար	1,000
Եվրո	1,000
Ռուբլի	50,000

²² Ոչ հաշվետեր հաճախորդների համար ԱՄՆ դոլարով, եվրոյով և այլ արտարժույթներով փոխանցումները կատարվում են «Թղթակից և բոլոր միջնորդ բանկերի ծախսերը գանձվում են փոխանցվող գումարից» տարբերակով:

²³ Միջնորդավճարը չի գանձվում այն դեպքում, երբ հաճախորդի հաշվից փոխանցման գումարը չեղարկման հայտ ներկայացնելու պահի դրությամբ դեբետագրված չէ:

²⁴ Ի լրումն վերոնշյալ սակագնի՝ երրորդ կողմի ներկայացված ծախսերը նույնպես ենթակա են փոխհատուցման հաճախորդի կողմից:

²⁵ Միջնորդավճարը չի գանձվում, եթե գումարը բանկից դուրս չի եկել:

լինելու դեպքում) վճարման հանձնարարականի հետ վերադարձ թղթակից բանկի կողմից	
6.1. ՀՀ դրամ	անվճար
6.2. ՌԴ ռուբլի	25,000 ՀՀ դրամ
6.2.1. Բնտերնետ-Բանկինգ/Մոբայլ Բանկինգ համակարգով ներկայացված հանձնարարականի դեպքում	10,000 ՀՀ դրամ
6.3. Արտարժույթ ¹⁶	25,000 ՀՀ դրամ
7. Անկանխիկ արտարժույթի մուտքագրում հաշվին	անվճար

5. ԷՍՔՐՈՈՒ ՀԱՇՎԻ ԲԱՑՈՒՄ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Սակագին	Ստանդարտ/Պերսոնա/Պրեմիում/Փարթներ
1. Հաշվի բացման և սպասարկման միջնորդավճար	մինչև 500 մլն ՀՀ դրամ կամ համարժեք այլ արժույթով գումարի գործարքների դեպքում՝ միանվագ 0,3% էսքրոու գումարից, նվազագույնը 50,000 ՀՀ դրամ, առավելագույնը 1,000,000 ՀՀ դրամ; 500 մլն ՀՀ դրամ կամ համարժեք այլ արժույթով գումարը գերազանցող գործարքների դեպքում՝ պայմանագրային՝ նվազագույնը՝ 1,000,000 ՀՀ դրամ
2. Էսքրոու պայմանագրում պայմանների փոփոխություն	25,000 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր լրացուցիչ համաձայնագիր կնքելու համար
3. Հաշվի փակում	Անվճար
4. Հաշվից գումարի կանխիկացում	համաձայն գլուխ 3-րդի («Կանխիկով կատարվող գործառնություններ»)
5. Հաշվից գումարի փոխանցում	համաձայն գլուխ 4-րդի («Փոխանցումներ»)

6. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՀԱՏՈՒՓԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐԻ Ի ՊԱՀ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐ

6.1 Անհատական պահատուփի օգտագործման սակագներ

(ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ)

Անհատական պահատուփի տեսակները			Սակագներ			
	«Կոմիտաս» մ/ճ	«Սայաթ Լովա» մ/ճ և «Կամար» մ/ճ	1 ամիս	3 ամիս	6 ամիս	1 տարի
Փոքր	250մմ*350մմ*90մմ	300մմ*100մմ*460մմ	15,000	20,000	30,000	35,000
Միջին	250մմ*350մմ*190մմ	300մմ*200մմ*460մմ	20,000	30,000	40,000	60,000
Մեծ	250մմ*350մմ*290մմ	600մմ*200մմ*460մմ	25,000	40,000	50,000	80,000
Շատ մեծ	-	600մմ*900մմ*460մմ	50,000	80,000	100,000	160,000

Անհատական պահատուփի կողպեքի փոփոխության և նոր բանալու տրամադրման համար Պահատուն պարտավոր է Պահատուին վճարել 25,000 ՀՀ դրամ (այդ թվում՝ ԱԱՀ): **Պերսոնա /Պրեմիում/Փարթներ**

փաթեթի հաճախորդներին տրամադրվում է 20% զեղչ՝ ցանկացած տեսակի և ցանկացած ժամկետով պահատուփի համար:

6.2 Արժեքների և պահ ընդունման սակագներ²⁶

(ՀՀ դրամ, Ներառյալ ԱԱՀ)

Արժեքների փաթեթի ծավալը	Սակագներ			
	1 ամիս	3 ամիս	6 ամիս	1 տարի
մինչև 1 կգ	5,000	15,000	20,000	30,000
1 կգ և ավելին	10,000	30,000	40,000	50,000

7. ՈՍԿՈՒ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՎԱԾ ՁՈՒԼԱԿՏՈՐՆԵՐԻ ՎԱՃԱՌՔ

Ոսկու ստանդարտացված ձուլակտորների վաճառքն իրականացվում է 1ունցիա, 5գ, 10գ, 20գ, 50գ, 100գ, 1000գ ոսկու քաշերով: Ձուլակտորի հետ հաճախորդին տրամադրվում է որակի սերտիֆիկատ:

Ըստ ձուլակտորների քաշային մեծության կատարվում է կանխիկ ոսկու գնանշում, սահմանվում են փոխաժեքներ, որոնք հրապարակվում են Բանկի ինտերնետային կայքի գլխավոր էջում www.ameriabank.am:

1.1. Ոսկու ստանդարտացված ձուլակտոր առանց փաթեթավորման	Տվյալ քաշի համար սահմանված կանխիկ ոսկու փոխարժեք
1.2. Ոսկու ստանդարտացված ձուլակտոր փաթեթավորմամբ	Տվյալ քաշի համար սահմանված կանխիկ ոսկու փոխարժեք +3,000 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ

8. ԵՐԱՇԽԻՔՆԵՐ

Ամերիքան Էքսպրեսսի օգտին թողարկվող երաշխիքներ	Պրեմիում/Փարթներ
1.3. դրամական միջոցների դեպոզիտներ	միանվագ 1% (գանձվում է երաշխիքի տրամադրման պահին), առավելագույնը 180,000 ՀՀ դրամ
1.4. այլ միջոցների գրավադրմամբ	միանվագ 1.5% (գանձվում է երաշխիքի տրամադրման պահին), առավելագույնը 250,000 ՀՀ դրամ
1.5. առանց գրավի	միանվագ 3%

²⁶ Ծառայությունը կիրառվում է ոսկյա իրերի գրավով վարկերի ամբողջական մարումից հետո գրավի առարկայի նկատմամբ՝ 10 (տասը) բանկային օրվա ընթացքում հաճախորդի կողմից այն հետ չպահանջելու դեպքում: